Հրապարակ օրաթերթ

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, ք. Երեւան Մաշտոցի 4, հեռ. 011 52-66-70,
Վկայական N03Ա 082118, գրանցման համարը՝ 26411008375, Ամերիաբանկ ՓԲԸ Հ/Հ 1570004015290100

Նամակ Լոռու մարզպետ Արեն Մկրտչյանին

Հարգելի՛ պարոն մարզպետ,
Դիմում եմ Ձեզ Վանաձորի Հովի. Աբելյանի անվան պետական դրամատիկական թատրոնի գործող շենքի ճակատագրի վերաբերյալ հանրային նշանակություն ունեցող մի շարք հարցերով:
2026 թվականի օգոստոսի 18-ին «Հրապարակ» օրաթերթում հրապարակվել է իմ հոդվածը՝ «Վանաձորի Աբելյանի անվան թատրոն. ոչնչացնե՞լ պատմությունն ու վանաձորցու հիշողությունը, թե՞ կառուցել ժամանակակից թատրոն» վերնագրով։ Հոդվածում անդրադարձել եմ գործող շենքի քանդման, նոր թատրոնի կառուցման, սեյսմիկ ուսումնասիրության, հանրային քննարկումների և թատրոնի հարակից տարածքում կատարված հանրային ներդրումների վերաբերյալ հարցերին։
Հաշվի առնելով, որ հարցը անմիջականորեն վերաբերում է Վանաձոր քաղաքի մշակութային միջավայրին, հանրային միջոցների օգտագործմանը և քաղաքի բնակիչների պատմական հիշողությանը՝ խնդրում եմ Ձեր իրավասության շրջանակում պարզաբանել հետևյալը.

1. Լոռու մարզպետի աշխատակազմը ե՞րբ և ի՞նչ փաստաթղթերով է տեղեկացվել Աբելյանի անվան թատրոնի գործող շենքը քանդելու և նոր շենք կառուցելու ծրագրի մասին:
2. Մարզպետի աշխատակազմն ի՞նչ փաստաթղթեր ունի գործող շենքի տեխնիկական և սեյսմիկ վիճակի վերաբերյալ:
3. Տեղյա՞կ է արդյոք մարզպետի աշխատակազմը գործող շենքի ամրացման և հիմնանորոգման տարբերակի մասնագիտական ուսումնասիրության մասին։ Եթե այո՝ խնդրում եմ տրամադրել դրա վերաբերյալ տեղեկությունը:
4. Եթե որոշվել է, որ գործող շենքը պետք է քանդվի, ո՞ր մասնագիտական փաստաթուղթն է այդ որոշումը հիմնավորում:
5. Ո՞վ է համեմատել գործող շենքի պահպանման/ամրացման և նոր շենքի կառուցման տարբերակների արժեքները, և որտե՞ղ են այդ հաշվարկները:
6. Ինչպե՞ս է մարզային իշխանությունը գնահատում այն հանգամանքը, որ թատրոնի հարակից հրապարակում և փողոցներում, ըստ հրապարակված տվյալների, կատարվել է շուրջ 162 մլն դրամի աշխատանք։ Եթե թատրոնի շենքի քանդումն ու նոր շինարարությունը նախատեսված էին, ինչպե՞ս է այդ ներդրումը համադրվել ծրագրի հետ:

7. Նոր շինարարության ընթացքում այդ տարածքի արդեն կատարված բարեկարգման աշխատանքների որևէ մասը վերափոխվելու կամ կրկին ֆինանսավորվելու անհրաժեշտություն կա՞:
8. Հանրային քննարկումների ընթացքում Վանաձորի բնակիչների և թատրոնի աշխատակիցների բարձրացրած առաջարկներից որո՞նք են արձանագրվել, և դրանցից որո՞նք են հաշվի առնվել վերջնական նախագծային լուծումներում:
9. Մարզպետի աշխատակազմը պատրա՞ստ է կազմակերպել բաց հանդիպում կամ քննարկում Վանաձորի բնակիչների, թատրոնի աշխատակիցների, անկախ ճարտարապետների, ինժեներների և համապատասխան պետական մարմինների մասնակցությամբ, որպեսզի շենքի քանդման անհրաժեշտության հարցը ներկայացվի ոչ թե ընդհանուր հայտարարություններով, այլ փաստաթղթերով:
10. Եվ վերջապես՝ արդյո՞ք մարզային իշխանությունը պատրաստ է հրապարակայնորեն երաշխավորել, որ պատմական շենքի նկատմամբ անդառնալի գործողությունից առաջ հասարակությանը հասանելի կլինեն դրա անհրաժեշտությունը հիմնավորող հիմնական մասնագիտական փաստաթղթերը:

Այս դիմումը որևէ անձի կամ կառույցի դեմ ուղղված չէ: Խնդիրը շատ ավելի մեծ է, քան մեկ շենքի ճակատագիրը:
Վանաձորին անհրաժեշտ է ժամանակակից թատրոն: Բայց Վանաձորին անհրաժեշտ է նաև վստահություն, որ նորի կառուցումը չի իրականացվում հնի պահպանման հնարավորությունը բավարար չափով չուսումնասիրելու գնով:

Եթե գործող շենքը իսկապես հնարավոր չէ պահպանել, հանրությանը դա ապացուցելը, կարծում եմ, դժվար չպետք է լինի: Իսկ եթե հնարավոր է եղել պահպանել այն, ապա այդ հարցի պատասխանն այսօր առավել կարևոր է, քան վաղը:
Խնդրում եմ տրամադրել գրավոր, հնարավորինս փաստաթղթավորված պատասխան:
Հարգանքով՝
«Հրապարակ» թերթի թղթակից Գագիկ Անտոնյան
Հեռ. 093 98 10 88